

թիւնից միւս հարստութեան և մինչեւ ԺԵ. դարը պահում
է իւր գոյութիւնը որպէս քաղաք, և ԺԵ. դարի կեսին
Անիում դեռ ոսկի դրամ էին կտրում։

Դժուար է տեսլ՝ թէ ինչն եղաւ պատճառ Անիի վերջ-
նական կործանման, որ ԺԶ. դարում արդէն մի գիւղ
էր, վերջնական հարուածը քաղաքին եղաւ, հաւանօրէն,
Լանդ-Թամուրի արշաւանըը. բայց, ի հարկէ, աւելի մեծ
նշանակութիւն ունէր Անիի բնակիչների գաղթը, որոնք սար-
սափահար էին եղել անընդհատ արշաւանըներից և Անիում
յաճախակի կրկնւող երկրաշարժներից։ Աւանդութեամբ,
որ հաստատում է հին պատմիչներով Անիի բնակիչները
գաղթեցին հարաւային Ռուսաստան, այս տեղից անցան
գէպի առևմուտք և տեղաւորուեցին Գալիցիայում ու
Լեհաստանում։

ԺԲ. դարից ոկտոս Անին, որպէս աւելակ պատկա-
նում է թուրքական բէկ Խաթուն—օղլիներին, որոնց վեր-
ջինը դեռ կենդանի է. 1878 թուի պատերազմից յետոյ
Անիի շրջակայիքը կարսի նահանգի հետ անցաւ ոռւսաց
տիրապետութեան։

(Հարունակելի)

Թարգ. Յ. Ա. Ե.



ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԵԿ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Հարունակութիւն)

Բ Ե Լ Գ Ի Ա Յ Ո Ւ Մ.

Ալենից 15 կիլոմետր հեռու պրուսական վերջին կայսրա-
նից սկսում է Բելգիան։ Մանում եմ մի երկեր, որը իւր ան-
ցեալով յիշեցնում է հայրենիքս, իսկ ներկայով նախանձու է շար-
ժում։

Բելղիան, պատմական Նիդերլանդի այդ մասը կարելի է ասել, որ իւր պատմոթեան ընթացքում հանդիսաւ օրեր, զարդացման խաղաղ պայմաններ չատ քիչ է տեսել: Գանուելով հզօր պետութիւնների որանքում և բնութիւնից պաշտպանուած չը լինելով, նա չարունակ ենթարկուել է արշաւանքների, աւերածութիւնների, օտարի հալատակութիւնների: Դեռ սկսած Յուլիոս Կեսարի ժամանակից այս երկրը կոխւների, աւերածութիւնների մի թատերաբեւ է հանդիսացել: Դեռ մի կողմէ թողած հոգմայեցինների գործածը, պատմական Նիդերլանդիայի այս մասը չարունակ աւերել. թալաննել են ֆրանկները, սպանացիք, ֆրանսիացիք և այլն: Այդ ամենի պակասը լրացրել են նապօլէօնեան աւերիչ պատերազմները: Բելղիան եղել է Եւրոպական երկրների մէջ ամենադժբախտներից մէկը և երկար ճաշակել է հզօր հարեանների պատմած անթիւ աւերածութիւնները:

Բայց որքան էլ այս երկրը աւերուած լինել, որքան էլ սըաշն քաղաքները, զիւղերը հրի ճարակ դարձած լինեն, այդ բոլորը Հայաստանի կրածի հետ համեմատած ոչինչ է: Ճիշտ է այդ երկուի բախտի մէջ նմանութիւն կայ, բայց այդ արտաքին է: Երկու խօսք պարզ ցոյց են տալիս այդ երկրներին վիճակուած բախտի տարրերութիւնը: Բելղիան զանւում է Եւրոպայում, իսկ Հայաստանը՝ Ասիայում: Այս չատ բան է ասում. այլ է Եւրոպայում տանջուել և այլ Ասիայում: Բելղիայում թշնամին ձգտել է քաղաքական իշխանութեան, բայց նա այնպիսի բարրարոս միջոցների չի դիմել, ինչպես ևն՝ խօսառ ոչնչացնել չեն զիւղեր. քաղաքները, ժողովրդին սրբել, զերել, պտղատու ծառերը, դաշտերը ոչնչացնել, կանանց, աղջիկների բոհաբարել և այլն: Բացի այս, այսօր Բելղիան ազատ է, վայելում է Եւրոպայի բարիքն և իւր զործած յառաջադիմութիւններով աշխարհի զարմանքն է շարժում, մինչդեռ իմ հայրենիքը զարերով նրանից յևտ է և տանջուում է խեղճութեան մէջ:

Բելղիայի Պրուսսիային սահմանակից մասը բնութեամբ չատ գեղեցիկ է: Պատահում են սիրուն ձորեր, ըլրակներ, անտառներ, զետակներ: Ինչքան ներս ենք զնում, այնքան աւելի ու աւելի բնութիւնը հետաքրքեր, զրաւիչ է զառնում: Քիչ ժամանակ անցած զնացքը մօտենում է Լիւտտիխ քաղաքին: Հեռուից ըլրակների և ծառերի մէջ թաղուած նշմարւում է Լիւտտիխը, որը բաւական մոայլապատ տեսք ունի, չորհիւ բազմաթիւ զործարանների աբձակած ծուխի: Դեռ քաղաքը չը մտած երեսում է ցուցահանդէսը: Կայարանում իջնելուն ալես շտապում եմ դէպի այնուղիւն:

Գեղեցիկ Լիւտտիխը այս տարի իւր մէջ հիրքներել է 1905 թուականի համաշխարհային ցուցահանդէսը: Մասս և Ռումի զե-

տերի ավին՝ մի ընդարձակ տարածութեան վրայ լնկնում է ցուցահանդէսը։ Անցնելով ցուցահանդիսի համար յատուկ կառուցած կամուրջով, այդտեղից պահ մի զիտելով չքնաղ Մասս գետը, որն այստեղ միանում է Ռոբի հետ, շտապում եմ դէպի ցուցահանդիսի վայրը։ Արադացնելով աջ ու ձախ ընկած խանութների, որքանական նաև Շինութիւնների մօտից, ուր կարելի է ամեն աղղի, տարապի մարդկանց հանդիպել, զիմում եմ դէպի ցուցահանդիսի գլխաւոր շինութիւնը։

Ցուցահանդէսը հետեւեալ պլանը ունի։ Ի ցոյց հանուած իրերը կամ զասաւորուած են մի ընդհանուր, զլխաւոր շինութեան մէջ։ Կամ ըստ երկրների՝ առանձին շինութիւնների մէջ և կամ էլ ըստ արդիւնագործութեան տեսակների՝ զանազան բաժանմունքներում։

Ամենից հետաքրքիր մասը կազմում է զլխաւոր, բնդկանուր շինութիւնը, որի մէջ բոլոր ազգերն էլ ի ցոյց են հանել իրենց հանձուրի, աշխատանքի պատովները։ Այստեղ առաջին տեղը ըստ առանձին է Բելզիան, իսկ սրան հետեւմ է Ֆրանսիան։ Այս երկու երկիրները աշքի են ընկնում իրանց ի ցոյց հանած առան կամ կարասիններով, անային զարդարանքներով և այլ թանկաղին գործածքներով։ Եշանաւոր տեղ է բոնում Յրիւսուէլ քաղաքը իւր կամ կարասիններով և կանացի զարդարանքներով։ Իսկ ֆրանսիական իրերը իրանց նուրբ շաճակով, գոյների աննման ընտրութեամբ միանգամայն հրաշալի են։

Թռուցիկ կերպով զիտելով զերմանական, անդլիւտեկան, ամերիկական բաժինները, որոնցից վերջին երկուան այնքան էլ մեծ մասնակցութիւն ցուց չեն տուել, մտնում եմ իտալական բաժինը։ Այս բաժնում պատուաւոր տեղ է բռնում և ամենին կախարդում է Ֆլորենցիա քաղաքի արդիւնագործութիւնը։ Այս քաղաքը, ինչպէս երեսում է, մինչի օրս էլ պահել է իւր փառքը, հաւատարիւ է մնացել իւր մեծ անուան։ Ֆլորենցիան ի ցոյց է հանել մեծ մասմբ զեղարուեստական իրեր։ ինչպէս են՝ բիւստեր, մարմարիայ արձաններ, իւղաններկ նկարներ և էլ ուրիշ զեղարուեստական իրեր։ Այստեղ, մնացած բաժինների համեմատութեամբ, այցելուներն այնքան շատ են, որ շարժուել չի կարելի։ Ետայական զեղարուեստը դէպի իրան է դրաւել անթիւ այցելուներ, որոնք նրանից զերուած ամբողջ ժամաներ կանգնում են և հետանալու մասին չեն էլ մտածում։

Իտալական բաժնին կից են ճապոնական և չինական բաժինները։ Արենեան այս երկիրները ի ցոյց են հանել զլխաւորապէս արենեան իրեր։ ինչպէս են՝ յաղճալակեայ անօթներ, փայտեայ առարկաներ, մետաքսեայ գործուածքներ և այլն։ Շապոնիան չը նայած պատերազմին, մեծ մասնակցութիւն է ցոյց տուել։ Աչքի

և ընկնում նրա արենիսան արդիւնագործութիւնները. նոյնպէս և ժամանակակից տեխնիկայի ստեղծագործութիւնները. Չինաստանը աժքողջովին արենիսան իրեր է ի ցոյց հանել, որոնցից շատերը պատրաստել դեռ չի յաջողուել եւրոպական գործարաններին:

Շատ հետաքրքրուելով ուսուական բաժնով, ևս շտապում եմ դեպի այնտեղ: Ծուսական բաժնին մեծ տեղ է յատկացրած, բայց քիչ հեռու է քնիած: Դոնից մանելով արդէն նկատալի էր, որ այստեղ շատ անհետաքրքիր է. մինչդեռ բարձրական, ճականական շինական և այլ բաժինները լիքն էին այցելուներով, այստեղ շատ քիչ մարդ կար: Այս բացատրում է Ծուսաստանի թոյլ մասնակցութեամբ: Որքան անկարգ, անխնամ կերպով են իրերը դասաւորուած և որքան թոյլ, չնչին է մի հակայ երկրի ցոյց տուած մասնակցութիւնը: Իսկ բաժինների վրայ հակողներ, ֆիրմանների ներկայացուցիչները շատ հաղուազիւտ են: Այստեղ այցելուների ուշադրութիւնը զրաւում է զլիուաւորապէս Պիտերբուրդի մի հայ վաճառատան ի ցոյց հանած ոսկերչական թանկադին իրերը, որոնք կովկասեան զործ են: Բաւական հետաքրքրութիւն էին շարժում երկու կովկասցիներ՝ աղդային տարագով, որոնք փայտեայ իրեր էին վաճառում (ձեռնամաքայտ, ծխամործ և այլն):

Թողնելով ուսուական բաժինը, ևս սկսեցի վիճակի պարսկականը և տաճկականը: Անցնելով չվեցյարական բաժնով, յանկարծ ականջիս հառան թուրքական մի քանի բառեր: Ես շտապեցի դեպի այդ կողմը, յուսալով՝ որ այնտեղ է զանուում թուրքական բաժինը: Եւ, իրաւ, քիչ յետոյ ևս արդէն պարսկական և տաճկական բաժնումն էի: Թուրքերէն խօսողը մի հայ ֆիրմայի ծառայող էր: Այդ ֆիրմայի ներկայացուցչի հետ ծանօթանալով՝ խօսրի էի բանուել, մէկ էլ տեսնեմ թուրքը հետաքրքրուած՝ կամաց-կամաց մեղ է մօտենում: Իմանալով, որ հայ եմ, նա կոտրուած ուսւերէնով սկսեց հետո խօսել և հարցնել, թէ որտեղացի եմ յայտնեցի, որ Ղարաբաղցի եմ, նա մի խոր հառաչեց և դարձեալ ուսւերէն՝ շատ մեծ դժուարութեամբ մի քանի խօսքեր առաց: Ես յայտնեցի, որ թուրքերէն հսուկանում եմ: Եա չափազանց ուրախացաւ և քաջալերուած՝ սկսեց զովել Ղարաբաղը. նրա քնութիւնը, բնակիչներին: Եմ խօսակից թուրքը նախ մի թունդ հայհոյեց իւր բազուեցի, երեանցի հայրենակիցներին և սկսեց յուսադրել, որ նա իւր դարաբաղցի հայրենակիցներին լաւ է ճանաչում, նրանք ճնամարդք չեն և հաշտ կը մնան հայերի հետ: Ես՝ չը կամենալով խօսակցիս վիշտ պատճառել, համաձայնութեան նշան տուի, թէպէտ հաւատացած էի, որ Ղարաբաղում էլ մօտ ապազայում ընդհարումներն անխուսափելի են: Խօսակցիս լեզուն բացուել էր. նա սկսեց ոլատմել իւր կեանքի մասին, ինչպէս նա շատ

Երկրներում եղել է, շատ ազդերի է ծանօթ, բայց նըան ամենից շատ սիրելին, կովկասն է և ուս ժողովուրդը։ Խուս ժողովրդի վրայ մանաւանդ նա հիացած է. նա ոչ մի տեղ, ասում է. չի պատահել այնպիսի պարզութեան, բարեհոգութեան, որպիսին ուս ժողովուրդին ունի։ Խոսակից թուրքս բոլորովին անդրադէտ էր։ անձունի կերպով խօսում էր ֆրանսերէն, բայց շատ տեղեկութիւններ ունէր։ Նա սիրով յանձն առաւ ինձ ուզեկցել և առաւ պարսկական և տաճելական բաժինները ցոյց առալու։ Այդ երկու բաժիններում ի ցոյց էին հանուած մեծ մասամբ զորդեր և մետաքսուայ զործուածքներ։ Բաժինները իրարից շատ մոտ էին, բայց ծառայողները, ըստ երիոյթին, իրար հետ հայտ չէին և միմեանց դէմ վատ էին արամադրուած։ Իմ թուրքը նոյնպէս չէր սիրում տաճիկ ծառայողներին։

Թողնելով ցուցահանդիսի զիխաւոր բաժինը, ուր զիո շատ Երկրների ցուցադրած իրերը չէի տեսել. ևս անցայ մերենանների, շոգեշարժների, զէնքերի բաժինը։ Այստեղ թաղաւորում է ժամանակակից արդիւնագործութիւնը իւր ամենանոր յաղթութիւններով, դիւտերով, կատարելութեան հասցրած սահղօթադրութիւններ։ Մեծ տեղ են բանում բելզիական, ֆրանսիական, զերմանական և անգլիական արամադրութիւններ։ Զէնքերի բաժնում իւր պատուաւոր տեսն ունի Լիւտտիխ քաղաքը։ Բաւական հետաքրքիր է և յայսնի զերմանացի արդիւնագործ կրուպին յատկայրած առանձին բաժինը։

Մասնագէտ չլինելով և քիչ բան հասկանալով, ևս թողեցի այդ հսկայական շինութիւնը և անցայ երկրորդական բաժիններին։ Գլխաւոր բաժիններից քիչ հեռու գտնուում են առանձին տէրութիւնների իրանց համար կառուցած շինութիւններն, ուր ի ցոյց են դրուած այդ տէրութեան զանազան արդիւնագործութիւններ։ Առանձին հետաքրքրութիւն են շարժում բալկաննեան տէրութիւնների շինութիւնները, իրանց ոճով և ի ցոյց հանած իրերով։ Շատ հետաքրքիր էին բուլղարական և սերբական շինութիւններն իրանց ազգային ոճով և միջի տարօրինակ իրերով։ Հետաքրքիր էր նոյնպէս ֆրանսիական գաղութների շինութիւնը իւր ի ցոյց հանած երերով։

Նստելով փոքրիկ շոգեկառքը, որը պատում է ցուցահանդիսի չորս կողմը և ամեն շինութեան առաջ կանգ է առնում, ևս կարողացայ համարեա թէ ամեն ինչ աչքի անցկացնել և մի ընդհանուր գաղափար կաղմել ցուցահանդիսի մասին։ Բնորհանրապէս կարելի է տեսլ, որ Լիւտտիխի ցուցահանդէսն ամենայաջողներից մէկն է, ամենամեծ մասնակցութիւնը ցոյց են. տուել Բելզիան և ֆրանսիան։

Յուցահանդիսից դուրս գալով, զնացի քաղաքը պտտելու:

Վալօնների մայրաքաղաքը - Լիւտտիխը, ոլէտք է ասել, բաւկան զեղեցիկ է: Այդ զեղեցկութիւնը նրան պարզեց և զեղեցիկ լամաս զետք և ծառաշատ բարձրութիւնները: Աղքատ չէ Լիւտտիխը և զեղեցիկ շինութիւններով: Շատ յայտնի են և տեսնելու արժանի նրա «St. Ieaque եկեղեցին» (Հիմնուած XI դարում), արդարագատութեան (Palais de Justice), բերդը (Citadelle) իւր զեղեցիկ տեսարանով և համալսարանը, որը 200900-ից աւելի դրբեր ունի:

Երեկոյեան ոէմ վերջին անգամ դիմելով այս գործարանաշատ քաղաքը, ճանապարհ բնելայ դէպի Բրիւսուէլ՝ Բելգիայի սիրութիւտիխց դէպի Բրիւսուէլ բնութիւնը կորցնում է իւր այն զրաւչութիւնը, որ ունէր Ախէնից մինչև Լիւտտիխ: Գեղեցիկ տեսարանները, բարձրութիւնները այլ ևս դէպի Բրիւսուէլ չեն շարունակում, այլ թեքում ևն դէպի Նամինը քաղաքը, որը հնումն անուանի բերդ էր: Լանդէն քաղաքից քիչ հեռու, ճանապարհի վրայ բնելում են հացանատիկների հսկայական դաշտեր, որոնք յայտնի են Բրաբանդ նահանգում: Դրանցից քիչ հեռու էլ գործում է պատերազմական Նէէր վենդի կոչուած դաշտը: Անցնելով պատմական և համալսարանական Լուվէն փոքրիկ քաղաքով, քիչ ժամանակից յետոյ հասայ Բրիւսուէլ:

Բրիւսուէլը զանուում է հոսմարեա թէ Բելգիայի կենտրոնում: Ծնորհիւ իւր այդ դիրքին ամեն ժամանակ նրա չուրջն է պատել Բելգիայի պատմութիւնը: Բրիւսուէլը միշտ բելգիական ժողովրդի քաղաքական և թէ մոռոր կեանքի կենտրոնավայրն է հանդիսացել և իւր այդ դիրքը մինչև օրս էլ պահել է: Բելգիայի մայրաքաղաքում միայն կարելի է Բելգիայի մասին որոշ լրիւ դադար կազմել: Այսուղ ամեն քայլակոխում մեր առաջն է ներկայանում աղատ, անելախ Բելգիան իւր կարծ ժամանակում ձեռք բերած յառաջադիմութիւններով: Այսուղ մարդ հանդիպում է այնպիսի սքանչելի գործերի, որ մի տեսակ ախտոսում է. թէ ինչու այս ժողովուրդը մի քանի դար առաջ չէ անկախութիւն ձեռք բերել, որ աւելի մեծ շահներով ծաղկեցնէր, դրախտ դարձնէր օտարներից աւերակ, անպաղաքիր դարձած իւր հայրենիքը:

Ընդամենը 75 տարի է, ինչ բելգիական ժողովուրդը սկիական ոյժերով, արեան զնով զնել է իւր անկախութիւնը, բայց չը նայած այդ կարծ ժամանակամիջոցին, նա հսկայական քայլեր է գործել: Ընդամենը 29500 քառակուսի կիլոմետր տարածութիւն բռնող այս երկիրը ներկայումս ժողովրդի խոռոշեամբ Եւրոպացում առաջնուն է (իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ միջն թուով ապրում են մօտ 23 հողի):

Բելղիան՝ շնորհիւ իւր աշխարհագրական դիրքի, քարածութիւնուառ հանքերի, օրէցօր արագ աճող ազգաբնակչութեան, բաւական յայտնի է իւր արդիւնագործութեամբ և առետուրով։ Ծառ զարգացած է մանաւանդ մետաղների և մեքենաների արդիւնագործութիւնը, և զրանով նոյն իսկ մրցում է Անգլիայի և Գերմանիայի հետ։ Թէ որքան Բելղիան յառաջաղիւմն է, այդ ցոյց է տալիս այն իրողութիւնը, որ այդ երկիրը ներկայումս երկաթուղիների կծերի խոռութեամբ աշխարհումս առաջինն է։ Անհյան չեն և նրա ջրանցքներն ու ճանապարհները։

Եւ այս ամենը ստեղծում և առաջ են տանում երկու ժողովուրդ, բարձր դնահատելով ընդհանուր հայրենիքի շահը, փառքը։ Բելղիան՝ զանուելով ֆրանսիայի և Գերմանիայի արանքում, չի կարողացել ժողովրդի ամրողջութիւն, միութիւն պահպանել և նրա մէջ ժամանակի ընթացքում ընակութիւն են հաստատել մի քանի ազգեր։ Բելղիայում ներկայումս ապրում են դիխաւորապէս երկու ժողովուրդ՝ Ֆլամանդներ և Վալօններ։ Վալօնները լեզուով, ընդհանուր կեսնքով շատ մօտ են Ֆրանսիացիներին և կազմում են ազգաբնակչութեան ինտելիգենտ, զարգացած մասը։ Ֆլամանդները գերմանական ծագում ունեն և զարգացմամբ վալօններից ցածր են։ Այս երկու ժողովուրդն էլ աւելի թեքուած են գէսլի ֆրանսիական լեզուն, սովորութիւնները և այլն կարելի է ասել, որ Բելղիան իւր վրայ ամրողջութիւն կրում է ֆրանսիական ազդեցութիւն, նու ֆրանսիական մի երկիր է։

Ֆրանսիայի այս ազդեցութիւնը խիստ նկատելի է մանաւանդ Բրիւսուէլում։ Եւ ի զուր չեն այս քաղաքը Շիոբրիկ Փարիզուանուանել (le petit Paris)։ Այս անունը նրան տուել են ոչ թէ միայն այն պատճառով, որ այստեղ իշխում է ֆրանսիական, աւելի ճիշտ՝ վարիզեան կեանքը, այլ Բրիւսուէլն այդ անունը վաստակել է և շնորհիւ իւր գեղեցիկ շինութիւնների, թանգարանների, աննոման զրուատեղինների և այլն։ Բրիւսուէլը շատ հեշտութեամբ կարող է մրցել եւրապական շատ ու շատ մայրաքաղաքների հետ։ Բելղիական մայրաքաղաքի գեղեցիկութեան մի կողմից նպաստել են առողջ կլիման ու շրջակայքը, իսկ միուս կողմից ժրածան բերդիացին ոչինչ չի խնայել նրան զարգարելու համար։ Չը նայած որ այս քաղաքը բազմիցս ոմբակոծուել է, հազարաւոր տներ, շատ շքեղ հաստակական շինութիւններ հողին են հաւասարուել, բայց և միլատակների տակից նորից գլուխ է բարձրացրել, աւերակների մոխարեն աւելի լաւերը կանգնեցրել։

Բրիւսուէլը բաղկացած է երկու մասից. վերին կամ հիւսիսային և ստորին կամ հարաւային։ Առաջին մասում ապրում են բուժուանները։ Այստեղ է, ի հարկի, Բրիւսուէլի ամրող փայլը,

հմայքը։ Առորին մասում տպրում են միջին և ցածր դասին պատկանողներ։ Մի հանգամանք, որ այս քաղաքում աչքի է ընկնում, այդ այն է, որ այստեղ հարուստ և աղքատ իրարից հեռու են տպրում, այն ինչ Գերմանիայում նոյն տան, շինութեան մէջ են բնակւում։ Բացի այս, այստեղ չը կան այնպիսի հսկայական շինութիւններ, որոնց մէջ ասպելիս լինեն 10-25 բնտանիք, ինչպէս զերմանիայում է։ ինչպէս երեսում է, այստեղ հոգը հաւասար չափով է բաժանուած, բոլոր տները շատ քիչ բացասութեամբ իրար հաւասար են ու շատ դէպքերում իրար նման։ Բրիւսսէլում կեանքը եռում է հիւսիսային մասում, ով անցի է նրա «Boulevard» կոչուած փողոցներով (Boulevard de Régent, rue Royale, rue de la Régence, place Royale, place de Palais, rue Eontagne de la Cour և այլն) շատ լաւ նկատած կը լինի. թէ որքան զեղեցիկ են որանք և որքան ճոխ, հարուստ են այդտեղ դանուած խանութները, որքան նուրբ, հիանալի են միջի տպրանքները, մանաւանդ կահկարասիք, զարգարանքի իրերը և այլն։

Բրիւսսէլի կենտրոնը կազմում է պատմական մեծ հրապարակ (grande place): Այստեղ է զանուում Բրիւսսէլի մեծ ժառանգութիւնը, նրա զեղեցիկ և ինքնօրինակ քաղաքային խորհրդարանը, որի հիմքը դրուել է XIV դարում։ Առջեի մասը կոթական ոճով է կառուցուած և միանդամայն հիանալի է։ Խորհրդարանը ունի 90 մետր մի աշտարակ, որտեղից դիտողի առջև բացւում է ամբողջ Բրիւսսէլն իւր շրջակայրով։ Շինութեան ներսը շատ յայտնի է թէ նկարներով և թէ պատմական թանկագին իրերով։ Խորհրդարանի հանգէպ կանոնադաս է «Արքայական տուն» կոչուած շինութիւնը, որն այժմ հասարակական թանգարան է։ Այս առաջ աւելի զեղեցիկ է ևղել, քան այժմ է։ 1763-ին ֆրանսիացիներից որմբակոծուելուց յիսոյ այլ ևս նոյն զեղեցկութեամբ չի վերացրնուել։

Բրիւսսէլի եկեղեցիներից ամենաանուանին է «St. Cédule» կոչուածը, որի հիմքը դրուել է XII դարում։ Յայտնի է իւր պատկերադարդ աղակեայ պատուհաններով, զեղեցիկ փայտեայ քարողի ամբիոնով։ Այս եկեղեցին յայտնի է և նրանով, որ ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ ծառայում էր որպէս բանականութեան տաճար։

Գեղեցիկ և հետաքրքիր են Բրիւսսէլի բօրսան, աղբային բանիլը, փոստատունը, արքայական պալատը, յայտնի աղակեածածկը միջանցքը և այլն։

(շարունակելի)

Հ. Մուսայելիս